շա–խանի, Կոտ–խանի, Մշեվերիկի, Մշեվերիկ–խանի, Էրբելի, Քերեսլի գեղերը եւ Զինգանէ–Քեօփրիւ–խանը: Մասսաթի ջուրը Էշէքսրթի լշ–ից բաղմաթիւ մանր վտակներ է ընդունում, որոց մէջ նկատելի է Լուշոնիֆ կամ Լուսոնք վտակը, որ ոռոգում է Լուսոնիֆ վանքը լերան լանջերում եւ Լուսոնիֆ գեղը տափարակում: Սաղրջա–գետակից իջնում է Սաղրջա առ–ը, որ ոռոգում է համանուն գեղը: Դէպի հիւսիս հոսելով Կալա վտակի ջրերին միախառնուած՝ միանում է Մասսաթի վտակին: Աղրջա առ–ը ոռոգում է Բուրնաս Էվէրէկ գեղը իրենց եայլաներով: Կալա–(սոցի) առուակի հետ զուգընթաց արեւելահարաւից դէպի հիւսիս է ուղղւում Էրզերում–Տրապիզոն խճուղին, որն անցնում է Բայբուրդից:

Հովտիկի վերոգրեալ 60 գեղերի մէջ 7–8 գեղ միայն տանելի կեանք ունին, մնացեալները ծայր աստիճան թշուառութեան մէջ են: ԺԹ–րդ դարի մէջ որեւէ հայ գեղ չկար այստեղ, բոլորն էլ բնիկներ են Իսլամն ընդունած եւ Թրքախօս: 60 գեղի մէջ որեւէ պայտաղ չունին բնիկներից, որ գոնէ մի էշ կամ եզ պայտէ. բոլոր արհեստաւորները հայեր են: Իսլամ որեւէ արհեստաւոր կամ առեւտրական չունին: Առաջ իրենց հում նիւթերը տալիս էին հայ արհեստաւորներին եւ չարչիներին, սրանցից իրենց կարեւոր ճոթն ու տրեխն էին գնում, կամ